

Биолог. журн. Армении, 3-4 (56), 2004

УДК 634.721(479.25)

ՀԱՂԱՐՋԵՆԻՆ, ՆՐԱ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ԴՐԱՆՑ ԴԵՍ

Յ.Լ. ԹԵՐԼԵՍԵՋՅԱՆ, Ա.Վ. ՄԻՐՁՈՅԱՆ

ՀՀ երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն,
378310, Էջմիածին

Բերված է հաղարջենու վնասատուների տեսակային կազմը ըստ սիստեմատիկական կարգերի (45 տեսակ միջատներ, 2-ը տզեր), այդ թվում ֆիլոֆագեր 70,2%, զեներատիվ օրգանների վնասատուներ 66%, շվերի և արմատների վնասատուներ 63,8%: Հիմնական վնասատուներն են *Eresoma ulmi* L., *Chionaspis salieis* L., *Synanthedon tipuliformis* Cl, *Abrexas grossalariata* L., *Eriophis ribis* Nal (Հայաստանում նշվում է առաջին անգամ): Որպես պայքարի միջոցառումներ կիրառվել են վարակված շվերի և ցողունների զարնանային ետ և ծծող վնասատուների դեմ սրսկումներ կծու տաքդեղի և կարտոֆիլի բույսից պատրաստած եփուկներով: Արդյունավետությունը ծծող միջատների դեմ կազմել է 95%:

Приводится видовой состав вредителей смородины по систематическим отрядам (45 видов насекомых и 2 клещей): филлофаги - 70,2%, вредители генеративных органов 66%, побегов и корней - 63,8%. Основными вредителями являются 5 (10,7%) *Eresoma ulmi* L., *Chionaspis salieis* L., *Synanthedon tipuliformis* Cl, *Abrexas grossalariata* L., *Eriophis ribis* Nal (в Армении отмечен впервые). Для борьбы с ними применяется обрезание зараженных ветвей и опрыскивание кустов отварами жгучего перца и ботвы картофеля. Эффективность против сосущих вредителей составляет 95%.

Species line of the pests of currant plants (45 types of insects and 2 pincers) has been investigated in accordance with their systematic groups: phyllophagous (70,2%), pest insects of generative organs (66%), and of shoots and roots (63,8%). 5 species are the main pest insects of the currant. These are *Eresoma ulmi* L., *Chionaspis salieis* L., *Synanthedon tipuliformis* Cl, *Abrexas grossalariata* L., *Eriophis ribis* Nal (registered for the first time in Armenia). Cutting of the affected shoots and spraying by the dilution of burning pepper and potato is suggested as to control the pests. Efficacy against the sucking insects is 95%.

Հաղարջենի - միջատներ - տզեր

Հաղարջենին (*Ribes* L.) որպես հատապտղային մշակաբույս ունի տնտեսական և գիտական մեծ նշանակություն: Դրա վրա զարգանում են մի շարք վնասատուներ՝ միջատներ, տզեր, որոնց պատճառած վնասի հետևանքով ընկնում է բերքի որակն ու քանակը: Առ այսօր Հայաստանում հաղարջենու վնասատուների հարցով չեն կատարվել հատուկ աշխատանքներ, չեն բացահայտվել վնասատուների տեսակային կազմը, որոշվել տնտեսական նշանակությունը և մշակվել պայքարի միջոցառումներ վնասատուների դեմ: Վնասատուներից հիմնականում նշվում են պոլիֆագ տեսակները, մոնոֆագները համարյա չեն ուսումնասիրվել [3, 5, 6]:

Նյութը և մեթոդը: Ուսումնասիրվել են հաղարջենու վնասատուները Երևանում և Արարատյան հարթավայրի նախալեռնային գոտում: Հետազոտություններով պարզվել է վնասատուների տեսակային կազմը և նրանց վնասակարության աստիճանը 5 փորձնական տարածքներում Երևան, Քանաքեռ, Ավան, Ջրվեժ, Աշտարակ: Ուսումնասիրվել է առանձին վնասատուների հասցրած վնասները, և փորձարկվել են հիմնական վնասատուների դեմ պայքարի միջոցներ:

Արդյունքներ և քննարկում: Հաղարջենին (*Ribes L.*) բավականին տարածված հատապտղային մշակաբույս է: Հայաստանում բնական պայմաններում հանդիպում են Հ.արևելյան (*R. orientale Dsf*), Հ.Բիբերշտեյնի (*R. Bibersteinir Berl.*), Հ.սև (*R. nigrum L.*) Հ.հայկական (*R. armenium A. Pojark*), Հ.ոսկյա (*R. aureum pnsh*), Հ.ալպիական (*R. alpium L.*) և Հ. ախուրյանի (*R. achurjanii Mulk*) տեսակները [1, 4]:

Հաղարջենու պտուղները լինում են տարբեր գույնի. արևելյան, ալպիական և ախուրյանի տեսակներինը՝ կարմիր կամ կարմրավուն, մյուսներինը՝ սև կամ այլ գույնի:

Հայաստանում տնամերձ այգիներում և ֆերմերային տնտեսություններում մշակվում են հաղարջենու բազմաթիվ սորտեր, մասնավորապես՝ զոլիաֆ (պտուղները սև են, մինչև 1,5 գ զանգվածով), նեապոլյան (սև, 1,5 գ), կրանդալ (սև կամ նարնջագույն, խոշոր պտուղներով), հոլանդական (կարմիր, մինչև 0,5 գ), կովկասյան (կարմիր, մինչև 0,5 գ): Առանձին վայրերում մշակվում են նաև “Կազկա” (սև, 1,2 գ), բելոռուսական (սև, մինչև 1,5 գ), “Ռանյայա” (կարմիր, մինչև 0,5 գ), “Չուկոսկայա” (կարմիր, մինչև 0,5 գ), “Մեդալ” (կարմիր, մինչև 0,4 գ) և այլ սորտեր [2]:

Հաղարջենու աճի և զարգացման, ինչպես նաև բերքի որակի ու քանակի վրա զգալի բացասական ազդեցություն են գործում վնասակար օրգանիզմները:

Գրական տվյալների [3, 5] և մեր ուսումնասիրությունների համաձայն հաղարջենու վրա հայտնաբերված է վնասատուների 47 տեսակ, այդ թվում՝ 45 միջատ և 2 տիգ: Աղյուսակում բերված է այդ վնասատուների կարգաբանական կազմը:

Աղյուսակ 1. Հաղարջենու վնասող միջատների ու տզերի կազմը ըստ կարգաբանական կազմը

Կարգը	Տեսակների քանակը	Քանակը բույսի տարբեր օրգանների վրա					
		Կոկոններ	Ծաղիկներ	Տերևներ	Շվեր	Արմատներ	որից վտանգավոր
1.Ուղղաթևեր	3	3	3	3	3	2	-
2.Թրիպսներ	1	1	1	-	-	-	-
3.Միակերպաթևեր	12	4	1	5	5	7	2
4.Երակարծրաթևեր	2	1	1	-	1	-	-
5.Կարծրաթևեր	6	4	4	5	3	3	-
6.Թաղանթաթևեր	4	-	-	4	-	-	-
7.Երկթևեր	-	-	-	-	-	-	-
8.Թեփուկաթևեր	17	4	1	15	2	2	2
9.Տզեր	2	1	2	1	2	-	1
Ընդամենը	47	18	13	33	16	14	5
%		38,3	27,7	70,2	34,0	29,8	10,7

Բերված տվյալները ցույց են տալիս, որ վնասակար տեսակների մեջ գերակշռում են տերևակերները, ապա կոկոնների և շվերի վնասատուները: Մնացած օրգանների վրա նշված տեսակների քանակը համարյա հավասար է:

Բերված տեսակների մեջ վնասակարության աստիճանով մեծ նշանակություն ունեն 5, կամ նշված տեսակների 10,6%-ը: Դրանք են.

Թեղու-հաղարջենու լվիճ (*Eriesoma ulmi* L.): Հանդիպում է ամենուրեք, լվիճները զարգանալով տերևների վրա առաջացնում են գալեր, որոնց մեջ և սնվում են լվիճները: Գալերը երբեմն հասնում են մինչև 8 սմ մեծության: Ուժեղ վարակված թփերի մոտ նկատվում է բերքի քանակի և որակի զգալի կորուստ:

Ուռնու վահանակիր (*Chionaspis salieis* L.): Նույնպես հանդիպում է ամենուրեք, հատկապես այն այգիներում, որտեղ հաղարջենին աճում է բարդենու և ուռնու ծառերի հարևանությամբ: Վահանակիրը մեծ քանակությամբ վարակում է ճյուղերը, ինչպես նաև շվերը, որի հետևանքով վերջիններս թուլանում են, նվազում է տերևների քանակը, իսկ ուժեղ վարակի դեպքում՝ ճյուղերը և ողջ բույսը չորանում է: Վահանակրով վարակված թփերի բերքը լինում է շատ քիչ, որակով ցածր:

Հաղարջենու ապակաթիթեռ (*Synanthedon tipuliformis* Cf.): Տարածված է ամենուրեք, վնասում է հաղարջենու բոլոր տեսակներին: Գարնանը թիթեռները ձվադրում են մատղաշ շվերի վրա, զագաթից 10-15 սմ ցած: Ձվադրված շվի զագաթը կախ է ընկնում: Ձվից դուրս եկած թրթուրը խորանում է շվի ներսը և նրա միջով անցք փորելով հասնում է մինչև արմատային մասը, որտեղ և հարսնյակավորվում է: Թիթեռների թռիչքը նկատվում է հաջորդ գարնանը մայիսին, հունիսին:

Հաղարջենու երկրաչափ (*Abrexas grossulariata* L.): Գարնանը ձվադրում են շվերի և ճյուղերի բողբոջների վրա: Թրթուրները դուրս գալով ձվերից անցնում են տերևների վրա և սնվում են դրանցով: Վնասը նկատվում է միայն զանգվածային զարգացման տարիներին, երբ մերկացնում են թփերը: Հանդիպում են ոչ ամեն տարի, հաճախ՝ փոքր տարածքներում:

Հաղարջենու բողբոջատիզ (*Eriophis ribis* Nal.): Համարվում է հաղարջենու վտանգավոր վնասատուներից մեկը: Այն Հայաստանում նշվում է առաջին անգամ: Նկատվել է Երևանում՝ երկու տնամերձ այգիներում: Երկու դեպքում էլ տնկանյութը բերված է եղել Ռուսաստանից: Տզերը սնվում են բողբոջների և ընծուղների վրա, որի հետևանքով առաջանում են ուռած գալեր, որոնց մեջ և սնվում են տզերը: Վարակված թփերի վրա նվազում է տերևների քանակը, ճյուղերը թուլանում կամ չորանում են: Բերքատվությունը լինում է շատ ցածր, իսկ բերքը՝ անորակ:

Վնասատուների դեմ պայքարի միջոցառումների օգտագործման համար մենք ելնում ենք այն բանից, որ թունանյութերի կիրառումը անհրաժեշտ է հասցնել նվազագույնի, քանի որ դրանք կարող են ազդել հատապտուղների որակի վրա, դրանով իսկ ոչ պիտանի դարձնել դրանց օգտագործումը բուժիչ նպատակներով:

Պեստիցիդների օգտագործումը կարելի է թույլատրելի համարել միայն վնասատուների քանակի աճի կամ զանգվածային զարգացման դեպքերում միայն վաղ գարնանը կամ բերքահավաքից հետո:

Հատապտղային մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի ընթացքում

կիրառել ենք բուժիչ և թունատու բույսերից պատրաստած թուրմը կամ եփուկը: Կծու պղպեղի փոշու եփուկը՝ պատրաստել ենք հետևյալ կերպ՝ 100 գ կարմիր կծու պղպեղի փոշին լցրել ենք 2 լ տաք ջրի մեջ, թրմել 2 օր, եռացրել 1 ժ և թողել 2 օր, ապա ֆիլտրել ու պահել պինդ փակված տարայի մեջ՝ մուգ տեղում: Աշխատանքային հեղուկը պատրաստելու համար այն նոսրացրել ենք ջրով 1:7 հարաբերությամբ: Ցողունը կատարվել է գարնանը, մինչև բույսերի ծաղկելը: Արդյունավետությունը ծծող վնասատուների և ֆիտոֆագների առաջին հասակի թրթուրների նկատմամբ կազմել է 95%: Որպես էտալոն օգտագործել ենք 0,3 % Բի-58 խե: Արդյունավետությունը կազմել է մինչև 98%:

Համարյա նման արդյունք է տվել նաև կարտոֆիլի բույսի չոր զանգվածից պատրաստած թուրմը: 400 գ չորացրած բույսը մանրացրել ենք, լցրել 5 լ տաք ջրի մեջ, թողել 3-4 ժ, ապա քամել ենք և օգտագործել: Հեղուկի ծախսը մեկ թփի հաշվով կազմել է 50-60 մլ: Ծծող միջատների նկատմամբ արդյունավետությունը կազմել է 80-90%:

Այսպիսով, Էկոլոգիապես մաքուր բերք ստանալու համար ֆիտոֆագների դեմ պայքարը հիմնականում պետք է տանել թունատու բույսերի (պղպեղ, լուլիկ, կարտոֆիլ և այլն) թուրմերով կամ եփուկներով: Քիմիական ինսեկտիցիդներ կարելի է կիրառել միայն վաղ գարնանը և ուշ աշնանը:

Ճյուղերի և արմատային վնասատուների դեմ պայքարը անհրաժեշտ է տանել ագրոտեխնիկական մեթոդներով՝ հատկապես գարնանային էտի և հողի փխրեցման միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գրիգորյան Ա.Ա.* Հայաստանի անտառների, ծառերի ու թփերի արժեքավոր տեսակները: Երևան, 1979:
2. *Եսայան Գ.Ա., Նալբանդյան Դ.Ա., Դասումյան Ա.Ա., Նշանյան Ա.Ռ., Տարասովա Ժ.Գ., Գրիգորյան Ա.Դ.* Խորհուրդներ այգեգործին: Երևան, 1990:
3. Հայաստանի գյուղատնտեսական կուլտուրաների, անտառների և պահեստների վնասատուները: ՀԳԱ հրատ., Երևան, 1976:
4. *Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ա.Լ.* Հայաստանի դեմդրոֆլորան: Գիրք 2-րդ: Երևան, 1986:
5. *Мирзоян С.А.* Дендрофильные насекомые лесов и парков Армении. Ереван, изд. Айастан, 1979.
6. *Савздарс Э.Э.* Вредители ягодных культур. М., 1960.

Поступила 13.II.2004